

ՔԱՂՈՒԹԱՐԱՅ ԿԵԱՆՔ

ԱՆՔԱՐԱ (Թուրքիա)

Թրքական «Թարաֆ» օրաթերթը 1 Յուլիսի իր թիւով լոյս ընծայած է Ալփեր Կեօրմիւշի բաւական ընդարձակ յօդուածը, որուն մէջ ան անդրադարձած է Նեսիմ Օվատիա Իսրայէլի հեղինակութեամբ իրատարակուած եւ Գրիգոր Չօհրապին լուրիւած գիրքին: Յօդուածագիրը խոստովանած է Գրիգորի հեղինակին այն մուտքը, որուն մէջ Օվատիա կը պատմէ, թէ սկզբնական շրջաններուն որքա՞ն սխալ գիտեր մօտիկ անցեալի պատմութիւնը, եւ թէ օր մը ինչպէ՞ս դէմ յանդիման եկած է «Հայոց Տեղահանութեան» հարցով պատահածներու իսկական պատմութեան: Ապա ան կը ծանօթացնէ Գրիգոր Չօհրապին անձը՝ իբրեւ օսմանեան խորհրդարանի երեսփոխան: Կրկնելով Նեսիմ Օվատիայի մտադրանքը յօդուածագիրը կը գրէ, թէ ինք կը մաղթէ, որ թրքական հանրութիւնը այլեւս ճանչնայ Գրիգոր Չօհրապը՝ Թուրքիոյ ժողովրդավարութեան պատմութեան այս արժեքաւոր գիւտը, եւ վերադարձնէ անոր բարոյական իրաւունքը:

ԹԻՖԼԻՍ (Կրաստան)

26 Յունիսին Թիֆլիսի խորհրդարանի գրադարանի ժողովասրահին մէջ տեղի ունեցած է Կրաստանի հայ գրողներու համաժողովը: Կիրահայոց թեմի մամոյ դիւանէն յայտնած են, որ համաժողովին մասնակցած են վրաստանաբնակ հայ ստեղծագործներ երկրին տարբեր շրջաններէն՝ Ջաւախքէն, Քուէմօ-Քարթլիէն (հիւսիսային Լոռի), եւ մայրաքաղաք Թիֆլիսէն: Համաժողովի անդամներ այցելած են Թիֆլիսի հայ գրողներու եւ հանրային գործիչներու «Խոճիվանք»ի պանթէոն ու ծաղիկներ գետեղած հայ մեծերու շիրմին, իսկ Կիրահայոց Առաջնորդ Վազգէն Եպս. Միրզախանեանի կողմէ կատարուած է հոգեհանգիստ: Ժողովին ելոյթ ունեցած է «Վերնատուն» միութեան նախագահ Գեորգ Սևիչեան:

ԼՈՆՏՈՆ (Անգլիա)

12 Յունիսին, յետ եկեղեցական արարողութեան հինգ հարիւրի հասնող ներկայներ վայելեցին Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցւոյ աննախադէպ դաշտահանուէրը: Եկեղեցին եւ ընդունտի սրահը կառուցուած են 1922-ին, Տրե Ե Տիկին Գալուստ եւ Նուարդ Կիւլպէնկեաններու կողմէ, թագաւորական թաղամասին՝ ԶԷՆ-զինկթընի մէջ, այդ տարիներուն հոն բնակող շուրջ 300 հայերու համար: Կրանածածկ կրպակներու մէջ, ժողովուրդին տրամադրութեան տակ դրուած են հայոց մասին հայերէն եւ օտար լեզուներով բազմաթիւ գիրքեր: Ներկայ էին լոնտոնահայ մտաւորականներ եւ ազգային ծանօթընէր: Ներկայ էր նաեւ Նորընտիր առաջնորդ՝ Վահան Ծ. Կրդ. եւ արժանապատիւ հայրեր: Պաշտօնական հիւրն էր ԶԷՆ-զինկթըն եւ ԶԷՆ-զինկթըն թագաւորական թաղամասերուն քաղաքապետուհին՝ Ճիւլի Միլզ, որ այցելեց նաեւ Ս. Սարգիս մատուռը առաջնորդութեամբ Դոկտ. Հրաչ Զիլինկիրեանի: Ներկայ էր պարոնուհի Գարոլայն Զոքսը, որ խօսք անելով դրուատեց հայերուն ներկայութիւնը Անգլիոյ մէջ: Ան Դարաբաղի համար բացառիկ նպաստաւոր աշխատանք տարած է:



ՆԻՍ (Ֆրանսա)

19 Յունիսին, Պարսամեան սրահին մէջ ելոյթ ունեցան Երեւանի ազգային օփերայէն մենեթրուիներ Սուսաննա Բակումեան-Արմաշան, որ այժմ Նիս կ'ապրի եւ Մարսիլիոյ Սահակ-Մեսրոպ երգչախումբէն Անի Երմազեան-Ռոնգե: Մաս կազմած են նաեւ Նիսի Սայաթ-Նովա երգչախումբէն Անյոյ Մարտիրոսեան եւ Բարսեղեանց: Դաշնակով կ'ընկերակցէր Ժիւլիէթ Երմազեան: Ներկայացուցած են Կոմիտասի, Չաքարեանի, Տիգրանեանի, Չայքովսկիի, Փուչինիի եւ ուրիշ հեղինակներու գործեր: Փակման խօսքը կատարած է խմբավար Խաչիկ Երմազեան: Գաղութին համար նշանակալից ձեռնարկ մը, որ անպայմանօրէն արձանագրուած պիտի մնայ ներկաներու յիշողութեան մէջ:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ (Պատմական Հայաստան)

Պոլսոյ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ Արք. Աթեշեան այցելած է քաղաքապետ Օսման Պայտեմիրին եւ Սուր քաղաքի թաղապետ Այտուլլահ Տեմիրպաշին, գանոնք պատուելով «Տիգրան Մեծ»ի շքանշանով: Սրբազանը նախ տեղեկութիւն տուած է դէպի Նիւ Եորք եւ Թորոնթօ կատարած իր այցելութիւններուն մասին, ապա փոխանցած է նախկին համաքաղաքացիներու գնահատանքի եւ երախտիքի զգացումները: Պայտեմիր ըսած է. «Տիգրաէքիը կը պատկանի հայերու, ասորիներու, դպտիներու, մահմետականներու եւ քիւրտերու: Ափսո՛ս որ անցեալին մեր հայ, ասորի եւ դպտի եղբայրները շատ մեծ տառապանքներ ապրեցան... Մենք կը դատապարտենք այդ անխղճութիւնը»: Ըսած է նաեւ, որ կը գիտակցի այդ սխալներուն ու կը փորձէ բարելաւել գանոնք:



ԿՐԸՆՈՂ (Ֆրանսա)

22 Յունիսին Հայ Մշակոյթի Տան մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն, ի պատիւ Հայաստանէն ժամանած պատուիրակութեան մը, կազմուած տաս համայնքներու եւ գիւղերու քաղաքապետներէ: Հրաւերը ուղղուած էր Ռոն Ալփի համայնքային եւ գաւառային ընկերութեան եւ Իզեր նահանգի ընդհանուր խորհուրդին կողմէ: Ան նպատակ ունէր նաեւ Ֆրանսայի օրինակով Հայաստանի զբօսաշրջութեան կազմակերպումը զարգացնել, հայկական գիւղերէն ներս գիւղատնտեսութեան արդի միջոցներ որդեգրել, արհեստանոցներ բանալ, Սեւանայ լիճին խեցեգործի արտադրութիւնն ու արտածումը ընդլայնել: Տեղւոյն նորաստեղծ «Գարուն» պարախումբը, պարուսոյց Պեթթիս Տերտեանի առաջնորդութեամբ կատարեց երկու պարեր: Կրէկուար Ադամեան ներկայացուց պաշտօնական հիւրերը՝ Իզեր նահանգի ընդհանուր խորհուրդի փոխ նախագահուհի Քրիստին Քրիֆօ, քաղաքապետ Միշէլ Տեպոյի ներկայացուցիչը՝ ժան Միշէլ Տեթրուայան եւ հոգեւոր հովիւը Բաբգէն քիւն, Ստեփանեան: Նաեւ Գեորգ Մալխասեանը՝ Սեւանի քաղաքապետը, Նելսոն Ռականեանը՝ Գորիսի, Արմէն Սադայոսեանը՝ Դիլիջանի, Մաացական Մաացականեանը՝ Թալիսի, Վարդան Յովհաննիսեանը՝ Ջերմուկի, Սամուէլ Դարբինեանը՝ Վանաձորի, Ժորայր Եկեանը՝ Արենիի, Սամուէլ Վարդանեանը՝ Բարաքարի, Վալոտիա Խոլստեանը՝ Վարդենիսի եւ Սարգիս Զարաքէշիշեանը՝ Ստեփանաւանի:

ՊԵՅՐՈՒՅ (Լիբանան)

Ասորիներու լիկայի նախագահ Հայկա Աֆրամ 28 Յունիսին այցելած է թրքական դեսպանատուն, ուր հանդիպում ունեցած է Լիբանանի մօտ Թուրքիոյ դեսպան Իւնան Եօզերլուզգի հետ: Ան գնահատած է Թուրքիոյ մէջ ասորի երեսփոխանի մը ընտրութիւնը, սակայն ըսած է, որ հակառակ Երոլ Տուրայի ընտրութեան ասորիները կը շարունակեն թրքական կառավարութեան պահանջել, որ ան ճանչնայ հայոց եւ ասորիներու դէմ Օսմանեան կայսրութեան գործած ջարդերը:

